ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«25» նոյեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-111/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Դեագա» ՍՊԸ-ի 10.11.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Դեագա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Դեագա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 10.11.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կողմից «Սննդի փաթեթի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին՝ թիվ 1 չափաբաժնի մասով (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը ներկայացված բողոքով տեղեկացրել է, որ Ընթացակարգի հրավերով նախատեսված է եղել, որ բոլոր փաստաթղթերը պետք է լինեն էլեկտրոնային ստորագրությամբ, ինչն Ընկերության կողմից կատարվել է և բոլոր փաստաթղթերում առկա են եղել էլեկտրոնային ստորագրությունները և նույնականացման քարտը՝ որով ստորագրվել են փաստաթղթերը, ևս ակտիվ է և վավեր:

Սակայն Երևանի քաղաքապետարանը չի կարողացել համակարգի միջոցով կարդալ էլեկտրոնային ստորագրությունը և այդ պատճառով դիմել է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին՝ (այսուհետ նաև՝ ԷԿԵՆԳ ՓԲԸ) էլեկտրոնայի ստորագրության վավերականության ճշտման համար, որից հետո ԷԿԵՆԳ ՓԲԸ-ից ստացվել է պատասխան առ այն, որ էլեկտրոնային ստորագրությունները առկա են բոլոր փաստաթղթերում, սակայն տեխնիկական պատճառներով այդ ստորագրությունները կիսատ են վավերացվել համակարգի կողմից: Այնուհետև, Պատվիրատուն, հիմք ընդունելով ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի կողմից տրված պատասխանը, գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ մերժել է Ընկերության հայտը:

Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընկերությունը կապնվել է ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի համապատասխան մասնագետի հետ, ով հեռահար կերպով մուտք է գործել Ընկերության համակարգիչ, որտեղից որ ուղարկվել են փաստաթղթերը և պարզվել է, որ բոլոր փաստաթղթերը ստորագրված են և միայն տեխնիկական պատճառով է, որ չեն կարողացել կարդալ ստորագրությունները:

Ընկերությունը, գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

1.կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել Ընթացակարգի հետագա ընթացքը, քանի որ չկասեցնելու դեպքում Պատվիրատուն կկնքի պայմանագիր,

2. անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի թիվ 3 արձանագրությունը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 16.11.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-111/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Դեագա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը բողոքը պնդել է ամբողջությամբ:

Նիստի ժամանակ ԳԲԽ-111/16 բողոքը քննող հանձնաժողովը ուսումնասիրել է Ընկերության կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված հայտի PDF ֆայլի էլեկտրոնային ստորագրությունը, որի վրա սեղմելով՝ համակարգը արձանագրել է թերություն, որն արտացոլվել է հետևյալ կերպ. «Signature is INVALIDE.-The document has been altered or corrupted since the Signature was applied - The signer's identity has not yet been verified»:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) Կենտրոն է ներկայացրել դիրքորոշումը և Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները, այդ թվում նաև՝ Պատվիրատուի կողմից 31.10.2016թ. ԷԿԵՆԳ ՓԲԸ-ին ուղղված գրությունը և այդ գրությանն ի պատասխան՝ ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի գրությունը:

Պատվիրատուն ԷԿԵՆԳ ՓԲԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը. «Երևանի քաղաքապետարանի կողմից սննդի փաթեթի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին www.arpeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով «Դեագա» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել: Ընկերությունը Հավելված 1-ի՝ դիմումի, 1.2-րդ կետով նշել է, որ հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ: Վերջինս պետք է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատի /վավերացնի/ հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերը՝ ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետև Կարգ) 35-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված դրույթների համաձայն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ընկերության փաստաթղթերը, ինչպես նաև փաստաթղթերի էլեկտրոնային ստորագրությունները, արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված PDF ֆայլի էլեկտրոնային ստորագրության վրա սեղմելով՝ համակարգը արձանագրում է թերություն, որն արտացոլվել է հետևյալ կերպ. «Signature is INVALIDE.-The document has been altered or corrupted since the Signature was applied - The signer's identity has

not yet been verified»: Նույնը նաև արձանագրվել է Ընկերության գնային առաջարկում՝ Հավելված 4-ում: Կարգի 45-րդ կետով սահմանված է, որ եթե մասնակցի գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա մասնակցի հայտը մերժվում է, շտկման ենթակա չէ: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, համաձայն որի գնահատող հանձնաժողովը դժվարանում է որոշում կայացնել՝ արդյոք Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը համարվում են էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված թե ոչ, որի արդյունքում էլ հայտնի չէ պետք է արդյոք մերժել մասնակցի հայտը, թե ոչ, որի վերաբերյալ խնդրում ենք սեղմ ժամկետում տրամադրել հստակ դիրքորոշում ստեղծված իրավիճակի վերաբերյալ»:

ԷԿԵՆԳ ՓԲԸ-ն Պատվիրատուի վերոհիշյալ գրության վերաբերյալ հայտնել է հետևյալը. «Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկ, Հավելված 4 PDF փաստաթուղթը ներառում է Գևորգ Ղասաբողլյանի՝ ՀԾՀ 2905920602, ոչ վավեր էլեկտրոնային ստորագրություն և հետևաբար սույն փաստաթուղթը չի կարող համարվել վավերացված էլեկտրոնային ստորագրությամբ: Տեղեկացնում ենք նաև, որ չի հաջողվել բացել փաստաթղթին կցված էլեկտրոնային ստորագրության հավաստագրերը և ստուգել էլեկտրոնային ստորագրության դարանում ներառված բոլոր անհրաժեշտ մանրամասները, այն է՝ էլեկտրոնային ստորագրության սերիա, համար, հանրային բանալի և տեխնիկական այլ մանրամասներ»:

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ 111/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-111/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-111/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից «Սննդի փաթեթի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու

նպատակով www.arpeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով թիվ 1 չափաբաժնով հայտ է ներկայացրել նաև «Դեագա» ՍՊԸ-ն:

2. Պատվիրատուն 31.10.2016թ. գրությամբ՝ առաջնորդվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված դրույթներով, հարցում է կատարել էլեկտրոնային ստորագրությունը սպասարկող ԷԿԵՆԳ ՓԲԸ-ին, վերջինիս տրամադրելով «Դեագա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բոլոր հավելվածների էլեկտրոնային և թղթային տարբերակները, խնդրելով հայտնել, արդյոք Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը համարվում են էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված, թե՝ ոչ:

3. Վերոհիշյալ գրությանն ի պատասխան՝ ԷԿԵՆԳ ՓԲԸ-ն հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված հավելվածները՝ ինչպես նաև Հավելված 4-ը, չի կարող համարվել վավերացված էլեկտրոնային ստորագրությամբ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.11.2016թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է՝ համաձայն ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 45-րդ կետի, ըստ որի գնային առաջարկում արձանագրված անհամապատասխանությունները՝ հրավերի պայմանների նկատմամբ շտկման ենթակա չեն:

5. Նիստի ժամանակ ԳԲԽ-111/16 բողոքը քննող հանձնաժողովը ուսումնասիրել է Ընկերության կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված հայտի PDF ֆայլի էլեկտրոնային ստորագրությունը, որի վրա սեղմելով՝ համակարգը արձանագրել է թերություն, որն արտացոլվել է հետևյալ կերպ. «Signature is INVALIDE.-The document has been altered or corrupted since the Signature was applied - The signer's identity has not yet been verified»:

4. ԳԲԽ-111/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Դեագա» ՍՊԸ-ի 10.11.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի գրությունը և կից

փաստաթղթերը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ) և ՀՀ կառավարության 07.07.2016թ. թիվ 700-Ն որոշումը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: «Ընդ որում, տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը զետեղված է «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով՝ բացառությամբ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերի, որոնց ժամանակ ***Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.».

Կարգ 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ

այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 7.9 կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Պատվիրատուն 31.10.2016թ. գրությամբ՝ առաջնորդվելով, Ընթացակարգի հրավերով, ինչպես նաև ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված դրույթներով, հարցում է կատարել էլեկտրոնային ստորագրությունը սպասարկող ԷԿԵՆԳ ՓԲԸ-ին, վերջինիս տրամադրելով «Դեագա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բոլոր հավելվածների էլեկտրոնային և թղթային տարբերակները՝ խնդրելով հայտնել, արդյոք Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը համարվում են էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված, թե՝ ոչ:

Վերոհիշյալ գրությանն ի պատասխան՝ ԷԿԵՆԳ ՓԲԸ-ն հայտնել է, որ ***Ընկերության կողմից ներկայացված հավելվածները, ինչպես նաև Հավելված 4-ը, չի կարող համարվել վավերացված էլեկտրոնային ստորագրությամբ***:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.11.2016թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է՝ համաձայն ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 45-րդ կետի, ըստ որի գնային առաջարկում արձանագրված անհամապատասխանությունները՝ հրավերի պայմանների նկատմամբ շտկման ենթակա չեն:

Նիստի ժամանակ ԳԲԽ-111/16 բողոքը քննող հանձնաժողովը նույնպես ուսումնասիրել է Ընկերության կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված հայտի PDF ֆայլի էլեկտրոնային ստորագրությունը, որի վրա սեղմելով՝ պարզվել է, որ համակարգը արձանագրում է թերություն, որն արտացոլվում է հետևյալ կերպ. «Signature is INVALIDE.-The document has been altered or corrupted since the Signature was applied - The signer's identity has not yet been verified»:

Նման պայմաններում Կենտրոնը գտնում է, որ Պատվիրատուն, մերժվելով Ընկերության հայտը, գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք «Դեագա» ՍՊԸ-ի 10.11.2016թ. բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի տեղակալ — Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ — Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-111/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ — Տ. Գևորգյան